ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 6, 1962 Общественные науки

Ս. Մ. Հակոբյան

ԱԶԳԱՄԻՋՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Արևմտյան Հայաստանում, որը ընդգրկում էր Օսմանական կայսրության Վանի, Բիթլիսի, Էրզրումի, Սվազի, Դիարբեքիրի, Խարբերդի վիլայեթների տերիտորիան, ըստ Կոստանդնուպոլսի հայկական պատրիարքական թեմի 1912 թ. հաշվումների, ապրում էր մինչև 2.615.000 մարդ։ Բնակչության նշանակալի մասն, այն է, 1.018.000 մարդ, կազմում էին այդ երկրի բնիկները՝ հայերը։ Արևմտյան Հայաստանում ապրում էին նաև 660.000 թուրք, 242.000 նստակյաց և 182.000 քոչվոր քրդեր և համեմատաբար ոչ մեծ թվով ուրիշ ազգություններ՝ չերքեզներ, լազեր, հույներ, պարսիկներ և այլն։ Այլ խոսքով, Արևմտյան Հայաստանի բնակչության 38,9%-ը կազմում էին հայերը, 25,4%-ը՝ թուրքերը, 16,3%-ը՝ քրդերը։ Մնացած 19,4%-ը այլ ազգություններ[1]։

Արևմտյան Հայաստանում արդյունաբերությունը թույլ էր զարգացած։ Հայ կապիտալիստներն ու բանկիրները, որոնց ձեռքում հիմնականում կենտրոնացված էր այն, շահագործում էին ինչպես հայ բանվորների, այնպես էլ մյուս ազգությունների բանվորների աշխատանքը։ Օրինակ, Սվազի վիլայեթի 153 ֆաբրիկաներում և ալրաղաց գործարաններում, որոնցից 130-ը պատկանում էր հայ ձեռնարկատերերին, 20-ը՝ թուրք, իսկ 3-ը՝ օտարերկրյա կամ խառն ընկերություններին, շահագործվում էր 14,000 հայ, 3,500 թուրք և այլ ազգությունների բանվորների աշխատանքը[2]։ Մոտավորապես նույնպիսի շերտավորում էր նկատվում նաև մյուս վիլայեթներում։

Արևմտյան Հայաստանի հայ, թուրք և քուրդ բնակչության հիմնական մասսան զբաղված էր գյուղատնտեսությամբ։ Հողերը հիմնականում պատկանում էին թուրք աստիճանավորներին և քուրդ բեկերին։ Այդ հողերում հայ գյուղացիների էժան աշխատանքի շահագործման հետ մեկտեղ շահագործվում էր նաև թուրք և քուրդ գյուղացիների աշխատանքը։ Իսկ այն հողերը, որոնք կենտրոնացված էին քիչ թե շատ ունևոր հայ գյուղացիների ձեռքում, սիստեմատիկաբար զավթվում էին թուրքական իշխանությունների և քուրդ բեկերի կողմից։ Արևմտյան Հայաստանի աշխատավոր մասսաներն ապրում էին ծայր աղքատության ու սովի պայմաններում։ Դրան նշանակալի չափով նպաստում էր թուրքական կառավարության հարկային թալանչիական քաղաքականությունը, որը տարվում էր ինչպես հայ, այնպես էլ այլ ազգությունների գյուղացիների նկատմամբ։ Աշարը (դեսյատինը), հողի հարկը, անասնահարկը և տասնյակ ուրիշ հարկեր ու, հատկապես դրանց գանձման ձևերը (ինչպես հայտնի է, Թուրքիայում կառավարությունը հարկերը կապալով հանձնում էր մասնավոր

[1] *Տե՛ս ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 57, գ. 734, թ. 6։*

[2] *Տես* Marcel Leart, La Question Armenienne a la Lumière des Documents, Paris, 1913. pp. 12, 67.

անձանց) ծանրանում էին գյուղացու վրա։ Հայ բնակչությունը, որպես ոչ մուսուլմանական, ընդհանուր հարկերից բացի, վճարում էր նաև հատուկ հարկեր. խարաջ՝ զինվորական ծառայությունից ազատվելու համար և ջիզե՝ գլխահարկ[3]։

Հայ աշխատավորների դրությունը առանձնապես վատթարանում էր նրանով, որ նրանց վրա կախված էր ֆիզիկական բնաջնջման մշտական սպառնալիքը։ Օսմանյան կառավարությունը ձգտում էր Արևմտյան Հայաստանը մաքրել բնիկներից՝ հայերից և արևմտա-հայկական վիլայեթները դարձնել զուտ մուսուլմանական տերիտորիաներ։ Այդ նպատակի համար XIX դարի վերջին քառորդում, սուլթան Աբդուլ Համիդի ժամանակ, մշակվել էր հայերի ոչնչացման որոշակի սիստեմ, որը հաջորդ 35—40 տարիների ընթացքում աստիճանաբար կենսագործվում էր։ Այդ սիստեմը ենթադրում էր՝ ա) հայ ժողովրդի զրկումը օրենքի հովանավորությունից և վարչության ու դատարանի պաշտպանությունից, բ) հայերին հասցնելը այնպիսի տնտեսական քայքայման, որը ստիպեր նրանց թողնել հայրենիքը, գ) հողերի բռնի զավթման միջոցով գյուղացիների հողազրկումը, որը խրախուսվում էր վարչության և դատարանի կողմից, դ) պարբերական մասսայական ջարդերն իրենց բոլոր հետևանքներով՝ սով, համաճարակ հիվանդություններ, սարսափելի մահացություն, մասսայական փախուստ օտար երկրները, ե) մուհաջիրների (մուսուլմանական վերաբնակիչների—Հ. Ս.) բնակեցումը հայկական հողերում։

Այդ սիստեմին ճշտությամբ հետևեցին 1908 թ. իշխանության գլուխ անցած և թուրքական բուրժուազիայի ու թուրք կալվածատերերի շահերն արտահայտող, այսպես կոչված, երիտասարդ թուրքերի լիդերները (իթթիհադիստները) ազգայնական «իթթիհադ վե թերեքի» (միավորում և առաջադիմություն) պարտիայի պարագլուխները։

Ներկա հոդվածում քննարկվում են ազգային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանում՝ վերոհիշյալ կառավարական սիստեմի երկու հանդուցային հարցերի (հայ գյուղացիների հողերի զավթումը և հայերի ջարդերը) հիման վրա։

Հայ գյուղացիների հողերի զավթումը, որը հատկապես հսկայական չափեր ընդունեց պատերազմի նախօրյակին, հիմնականում իրականացվում էր երկու ձևով՝ 1) հողերը բռնագրավվում էին թուրքական իշխանությունների կողմից և հանձնվում մուհաջիրներին, 2) հողերը պարզապես զավթվում էին քուրդ բեկերի կողմից և յուրացվում։

Հայ գյուղացիների հողերի զավթումների մասին շատ է գրվել ժամանակի հայկական պարբերական մամուլում և գրականության մեջ[5]։ Դրանց մասին շատ տեղեկություններ են պահպանվել նաև այն ժամանակվա դիվանագիտական

---

[3] Թուրքական կառավարության հարկային սիստեմի մասին տես А. Д. Новичев. Очерки экономики Турции до мировой войны, М., 1937, стр. 63, 190; Саркисян Е. К., Аграрная политика Османского правительства в Западной Армении во второй половине XIX века, Ереван, 1957, стр. 71—92. Ն. Ա. Մախմուդով, Թուրք ժողովուրդը, Ն., 1959, էջ 55—59։

[4] Տե՛ս Պետական Ռազմա-պատմական կենտրոնական Արխիվ (ՊՌՊԿԱ), ֆ. 2000 c, ց. 1, գ. 991, թ. 554։

[5] Տե՛ս «Հողային խնդիրը Տարոնում» հոդվածը, «Արարատ», 1913 թ., հունվար. Бекгульянц, По Турецкой Армении, Ростов н/Д, 1914.

գրագրություններում։ Ահա թե Արևմտյան Հայաստանի գրության մասին ինչ է հաղորդել Կոստանդնուպոլսում ռուսական դեսպան Գիրսը, 1912 թ. նոյեմբերի 12-ին. «Ագրարային հարցը սրվում է օրեցօր։ Հողերի մեծ մասը զավթվել ու զավթվում է քրդերի կողմից, և իշխանությունները ոչ միայն արգելք չեն հանդիսանում, այլ անգամ հովանավորում և աջակցում են այդ զավթումներին»։ «Հողի հարցը սրվում է օրեցօր. հատկապես այն պատճառով, որ թուրքական իշխանություններն ամենաանամոթ ձևով խրախուսում են քրդերի կողմից հայկական հողերի զավթումը, երբեմն ստիպելով հայերին ստորագրել իրենց հողերը զավթողների վրա վավերացնող ակտեր»[6]։ 1913 թ. մայիսի 6-ին դեսպանը Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրին զեկուցում է Կոստանդնուպոլսի հայկական պատրիարքի այն հուշագրի մասին, որի մեջ ասվում է, որ թուրքական կառավարությունը մուսուլմանական տարրերով (մուհաջիրներով) աստիճանաբար բնակեցնում է հայաբնակ մարզերը[7]։ Այդ հուշագրից երևում է, որ 1912 թ. հոկտեմբերից մինչև 1913 թ. մայիսը, այսինքն յոթ ամսվա ընթացքում, պատրիարքը կառավարությանն է ներկայացրել 176 թաքրիր (բողոք)՝ հայկական հողերի զավթման կապակցությամբ։ Ըստ պատրիարքական թեմի տվյալների՝ միայն 1913 թվականի ընթացքում հայերից բռնագրավել են 30 հազար գյուղացիական տնտեսություններ։ Բայց այդ տվյալները դեռևս շատ հեռու էին լրիվ լինելուց նախ այն պատճառով, որ զավթման ոչ բոլոր փաստերի մասին էին զեկուցում պատրիարքին և երկրորդ, այն պատճառով, որ պատրիարքի տվյալների մեջ չէին մտնում հայ գյուղացիների այն հողերը, որոնք հարկահավաքների կողմից վաճառվում էին աճուրդի միջոցով[8]։

Ինչպես պատրիարքի թաքրիրներում ու դեսպանների զեկուցագրերում, այնպես էլ պարբերական մամուլում և գրականության մեջ սքողվում էին հողային հարցի դասակարգային հակասությունները, և ընդգծվում էր բացառապես ազգային կողմը։ Գործը ներկայացվում էր այնպես, իբր բոլոր թուրքերի և քրդերի կողմից, առանց դասակարգային տարբերության, զավթվում էին հայ գյուղացիների հողերը։ Իրականում դա բոլորովին էլ այդպես չէր։ Բռնագրավված հողերը, իհարկե, չէին հասնում Արևմտյան Հայաստանի քուրդ և թուրք գյուղացիներին. ավելին, հենց իրենց՝ թուրք և քուրդ գյուղացիների հողերը բռնագրավվում էին նույն թուրքական իշխանությունների և քուրդ բեկերի կողմից։ Ինչ վերաբերում է մուհաջիրներին, ապա նրանք իրենց դասակարգային կազմով միատեսակ չէին։ Հայ գյուղացիների հողերը, որպես կանոն, բաժին էին ընկնում Բալկանյան առաջին պատերազմի հետևանքով Մակեդոնիայի և նրան հարակից շրջաններից դուրս շպրտված թուրքական հարուստ աստիճանավորներին և ֆեոդալներին։ Իսկ թուրք գյուղացիները՝ նոր հողերի վերաբնակիչները, պետք է բատրակություն անեին այնպես, ինչպես հին հողերում։

Ընդհանուր տառապանքների և անտանելի ճնշման հիման վրա առաջ էր գալիս հայ գյուղացիների բարեկամությունը քուրդ և թուրք գյուղացիների հետ, որոնք հաճախ բնակվում էին միասին, նույն գյուղերում։

---

6 «Сборник дипломатических документов. Реформы в Армении», Петроград, 1915, стр. 3, 11.

7 Տե՛ս նույն տեղում, էջ 33։

8 Տե՛ս ՊՈՊԿԱ, ֆ. 2000 с, ց. 1, գ. 991, թ. թ. 555—556։

Թուրքական իշխանությունները և քուրդ բեկերը անում էին ամեն ինչ, որպեսզի պառակտեն այդ բարեկամությունը։ Վերջիններս թուրքական ու քրդական աշխատավորական մասսաների մեջ զայրույթ էին հարուցում ընդդեմ «անհավատ գյավուրների», ընդդեմ հայերի։ Արևմտահայերի մեջ գործող դաշնակների պարտիան նույնպես անում էր ամեն ինչ, որպեսզի ազգային թշնամանք հրահրի հայ, թուրք և քուրդ աշխատավորների միջև։ Սակայն դա չէր խանգարում դաշնակցական պարագլուխներին՝ բարեկամական հարաբերություններ հաստատել երիտասարդ թուրքերի լիդերների հետ։

Հայկական հողերի զավթումից թուրք և քուրդ գյուղացիները ոչ մի շահ չէին ստանում և դրանում շահագրգռված չէին, այլ ավելին, նրանք աջակցում էին հայ գյուղացիներին՝ բռնագրավված հողերը վերադարձնելու համար մղած նրանց պայքարում։ Այդ տեսակետից բնորոշ է Պետական Ռազմա-Պատմական Կենտրոնական Արխիվում, Ռուսական բանակի Գլխավոր շտաբի գործերում պահպանված մի փաստաթուղթ։ Փաստաթուղթը կազմող օբյեկտիվ դիտողը, որը, ակներևաբար, լավ ծանոթ է եղել Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական պայմաններին, այն հարցին, թե ինչու քուրդ և հայ գյուղացիները թշնամաբար չեն տրամադրված միմյանց նկատմամբ, տալիս է այսպիսի պատասխան. «1. Հողերը, ինչպես ասվել է, զավթվել են գլխավորապես բեկերի կողմից։ 2. Այդ հողերում կամ ոչ ոք չի բնակվում, կամ, եթե անգամ բնակվում են քրդեր, ապա միայն որպես մրիբներ (բատրակի նման), որոնք բացարձակապես ոչինչ չեն կորցնում, երբ նրանց տեղափոխում են ուրիշ վայրեր։ 3. Քուրդ գյուղացիների գիտակցելը, որ հողերն ըստ իրավունքի պատկանում են հայերին։ 4. Քուրդ գյուղացիների հույսը, որ բեկերից հայկական հողերը ետ վերցնելուց հետո, հերթը կհասնի այդ նույն բեկերից քուրդ գյուղացիներին պատկանող հողերի ետ վերցնելուն»[9]։ Այս փաստաթղթում տրված քուրդ և հայ գյուղացիների հարաբերությունների ճիշտ գնահատականի հետ չի կարելի չհամաձայնվել։ Ասվածի հիման վրա հեղինակը հանգում է հետևյալ ճիշտ եզրակացության. «Հայերի, այսպես կոչված, պայքարն ընդդեմ քրդական բռնության, դա հայ գյուղացիների պայքարը չէ քուրդ գյուղացիների դեմ, այլ պայքար է ընդդեմ քուրդ բեկերի, որոնց թուրքական կառավարությունը ամեն կերպ խրախուսում է՝ հանուն հայերին հայրենիքից վտարելու»[10]։ Իրենք՝ հայ գյուղացիները, ի տարբերություն դաշնակցական պարագլուխների, շատ լավ էին հասկանում այդ։ Նրանցից մեկը, գյուղացի Լորիոն, դիմելով դաշնակ Վ. Փափազյանին, ասել է. «Ջոջ շներին պիտի սատկեցնել, ինոնք են մեղավոր, թե չէ ֆուքարա (աղքատ —Հ. Ս.) թաթարը խեղճ է»։

Հայ և այլ ազգությունների ճնշված գյուղացիները ոչ միայն թշնամաբար չէին տրամադրված միմյանց նկատմամբ, այլ հաճախ պաշտպանելով իրենց հողն ու անասունները, համատեղ պայքար էին մղում բեկերի հրոսակախմբերի դեմ։ Ահա մի օրինակ այդ պայքարից. 1909 թ. հայ գյուղացիները Թզիթզանց գյուղի մոտ (Վանի վիլայեթի Շատախի շրջան) 48 ժամ անընդհատ մարտնչում էին քուրդ ավազակների դեմ, որոնք քրդերից մեծ քանակությամբ անասուններ էին հափշտակել։ Ետ խլելով անասունները, հայերը դրանք վերադարձրին տերերին՝ քուրդ գյուղացիներին[11]։ Կամ ուրիշ օրինակ. հայ քոչվոր գյուղացինե-

9 Տե՛ս ՊԴՊԿԱ, ֆ. 2000c, ց. 1, գ. 991, թ. 557։

10 Նույն տեղում։

11 Տե՛ս նույն տեղում։

ը, որոնք սովորաբար ձմեռում էին Մշո հովտի Կվարս գյուղում (Բիթլիսի վիլայեթ), զբաղված էին բացառապես անասնապահությամբ։ Նրանց կողքին ապրում էին քուրդ քոչվորները։ Հայերն ու քրդերը բարեկամություն էին անում միմյանց հետ։ Քրդերն ունեին թշնամիներ՝ բեկերի ավազակախմբերը, որոնց հետ նրանք գրեթե ամեն ամառ ընդհարվում էին։ Հայերը միշտ հանգես էին գալիս ի պաշտպանություն քուրդ քոչվորների։ Այդ փոխադարձ շահագրգռվածության վրա հիմնված էր հայ քոչվորների բարեկամությունն ու խաղաղ հարևանությունը քոչվոր քրդերի հետ, որոնք ունեին միևնույն սովորություններն ու բարքերը[12]։ Հայ և քուրդ գյուղացիների միջև բարեկամական հարաբերությունները հաստատող այսպիսի օրինակներ կարելի է շատ բերել։ Վանում ռուսական փոխ-հյուպատոս Օլֆերևը, որը ուշի ուշով հետևում էր թուրքա-քրդա-հայկական հարաբերությունների զարգացմանը, 1910 թ. ապրիլի 7-ին Կոստանդնուպոլիս՝ դեսպանին ուղարկած զեկուցագրի մեջ գրել է. «Վանի վիլայեթում ես չեմ նկատել կրոնական թշնամանք քրիստոնեության և իսլամի միջև։ Գժտությունները, որոնք տեղի էին ունենում այստեղ, միշտ իրենց հիմքում ունեին տնտեսական շահերը կամ քաղաքական նկատառումները»[13]։ Այդ պատճառով էլ զարմանալի չէ, որ հայերին և գլխավորապես հայ գյուղացիությանը հասցված կոտորածին ու թալանին, որպես կանոն, մասնակցում էին ոչ թե թուրք և քուրդ գյուղացիական մասսաները, այլ առավելապես թուրքական իշխանությունների կողմից հրահրված՝ թուրք և քուրդ բեկերի ավազակային հրոսախմբերը։

Թուրքական կառավարությունը միջոցներ էր ձեռնարկում, որպեսզի հայերի առաջիկա համընդհանուր կոտորածի ժամանակ հենվի հատկապես քուրդ բեկերի ավազակախմբերի վրա։ Դրա համար էլ նա խրախուսում էր այդ ավազակախմբերի հարձակումները հայերի վրա, իսկ ավազակներին, որպես կանոն, չէր պատժում։ Ահա, այդ առիթով մի շարք քաղվածքներ նախապատերազմական տարիների հյուպատոսական զեկուցագրերից. «Այն, ինչ այժմ տեղի է ունենում Վանի վիլայեթում, կարելի է անվանել անարխիայի սկիզբ։ Վերջին ժամանակվա ընթացքում սպանվել է 27 հայ։ Անասունների հափշտակումը դարձել է սովորական երևույթ։ Կողոպուտն ընդհանուր բնույթ է կրում։ Ամենից սարսափելին այն է, որ հանցագործություններից ոչ մեկը չի բացահայտվել»,— Կոստանդնուպոլսի դեսպանին է զեկուցել Օլֆերևը 1912 թ. օգոստոսի 25-ին[14]։ «Այս տարիների ընթացքում, ինչ ես գտնվում եմ այստեղ, ոչ մի ավազակ, ոչ մի մարդասպան չի ձերբակալվել»,— զեկուցել է նա 1913 թ. հունվարի 1-ին[15]։ «Թալանն ու կողոպուտը բանակային 3-րդ տեսչության շրջանում (այդ շրջանի մեջ էին մտնում Արևմտյան Հայաստանի բոլոր վեց վիլայեթները —Հ. Ս.) 1913 թվականի ընթացքում չեն դադարել, իսկ երբեմն էլ ուղղակի համաձարակային բնույթ են կրել։ Թալանի, կողոպուտի, մարդասպանության մասին զեկուցագրերը ստացվում էին պարբերաբար յուրաքանչյուր փոստի հետ։ Դրանցում առավելապես մեղադրում էին քրդերին, իսկ տուժող տարրերը գրեթե բացառապես հանդիսանում էին հայերը»,— 1913 թ. նոյեմբերի 18-ին Էրզրումի ռուսա-

---

12 Տե՛ս Бекгульянц, указ. соч., стр. 54.
13 Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 521, ց. 2, գ. 492, թ. 168։
14 Նույն տեղում, գ. 76, թ. 266։
15 Նույն տեղում, գ. 96, թ. 13։

կան դեսպանությունից հայտնել են Կովկասի ռազմական օկրուգի շտաբին[16]։ «Ջելալ աշիրետի այստեղ բնակվող շեֆը՝ ռուսատյաց Շեյխ Իբրահիմը իր քրդերին հրամայել է պատրաստվել հայերի ջարդին և դրան անցնել, հենց որ նա կկարդադրի», 1912 թ. դեկտեմբերի 20-ին Բայազետից հայտնել է փոխ-հյուպատոս Ակիմովիչը[17]։ «Թուրքական կառավարության կողմից Վանի, Բաշկալայի շրջաններում թուրքական քրդերին բաժանվել է մոտ 1000 հրացան», 1913 թ. նոյեմբերի 18-ին զեկուցել են ռուսական բանակի Գլխավոր Շտաբին[18]։

Հայ աշխատավոր մասսաները լավ էին հասկանում, որ իրենց դժբախտությունների պատճառը թուրքական իշխանություններն են։ Նրանք զգում էին և հասկանում, որ երիտասարդ թուրքերը հանդիսանում են սուլթանական ռեժիմի՝ ասիմիլյացիայի դաղանային քաղաքականության շարունակողները։ Էրզրումի ռուսական հյուպատոսությունից այդ առթիվ Կովկասի ռազմական օկրուգի շտաբին հայտնել են. «Ներկայումս թուրքահայերի միջև նկատվում է պառակտում. մի կողմից «դաշնակցություն» պարտիայի պարագլուխները բարեկամություն են անում երիտասարդ թուրքերի հետ և ամեն կերպ ձգտում են ընդգծել իրենց նվիրվածությունը երիտասարդ Թուրքիային ու կոնստիտուցիայի գործին և, դրա հետ մեկտեղ, պահպանել իրենց իշխանությունը հայ ժողովրդի հիմնական մասսայի վրա, մյուս կողմից՝ հայկական բնակչությունն սկսում է, հավանաբար, նեղություն զգալ դաշնակցականների խնամակալությունից և ձգտում է կամաց-կամաց ազատվել նրանից, հավանություն չտալով իրենց «առաջնորդների» չափազանց սերտ բարեկամությանը թուրքերի հետ, որոնց նկատմամբ ինքը վերաբերվում է չթաքցված թշնամությամբ և անվստահությամբ»[19]։

1914 թ. սեպտեմբերին, այսինքն Թուրքիայի պատերազմի մեջ մտնելուց մեկ ամիս առաջ, թուրքական կառավարության ներկայացուցիչները (Նաջիրեյը և ուրիշներ) բանակցություններ էին վարում դաշնակցական պարագլուխների հետ՝ վրա հասնող պատերազմում արևմտահայերի դերի մասին[20]։ Երիտասարդ թուրքերի լիդերների համար այդ բանակցությունները ծառայում էին որպես քող, որի ետևում նրանք պատրաստվում էին հայերի ֆիզիկական բնաջնջման ծրագրի լրիվ իրագործմանը։ Նոր ժամանակաշրջանում ծրագրի հիմնական կետերն էին. 1. Հայ ժողովրդի արական սեռի ոչնչացումը՝ սկսած անչափահասներից և վերջացրած պառամյալ ծերունիներով։ 2. Կենդանի մնացած կանանց, աղջիկների և որբերի մահմեդականացումը։ 3. Հայկական ունեցվածքի թալանումը։ Ծրագրին համապատասխան, տեղական իշխանություններին հրահանգ ուղարկվեց հայերի ջարդի և դեպորտացիայի մեթոդների մասին։ Հրահանգը առաջարկում էր տվյալ մարզի բարձրագույն քաղաքացիական, ռազմական, ոստիկանական աստիճանավորների կազմից տեղերում ստեղծել հատուկ հանձնաժողովներ, որոնք պետք է ղեկավարեին այդ գործը[21]։ Այդ հրահանգի ոգով, պատերազմի ընթացքում, ընդունվում էին թուրքական կառավարության որոշումները, իջեցվում էին հրամաններ ու կարգադրություններ՝ հայկական ազ-

16 Նույն տեղում, գ. 91, թ. 461։

17 «Сборник дипломатических документов»..., стр. 19.

18 Վրաց. ՍՍՌ ԿԳԳԱ, ֆ. 71, ց. 2, գ. 124, թ. 136։

19 Վրաց. ՍՍՌ ԿԳԳԱ, ֆ. 71, ց. 2, գ. 43, թթ. 163—164։

20 Տե՛ս ՀՍՍՌ ԿԳԳԱ, ֆ. 45, ց. 1, գ. 1—6, թ. [illegible]. „Армяне и война", Одесса, 1916, № 4, стр. 47 և այլն։

21 Տե՛ս ՀՍՍՌ ԿԳԳԱ, ֆ. 60/200, գ. 284, թ. թ. 51—64։

գարնակչության կոտորածի և դեպորտացիայի մասին։ Չնայած թուրքական կառավարության բոլոր ջանքերին, գաղտնի պահելու նշված հրամանները և կարգագրությունները, այնուամենայնիվ նրանց մի մասը հայտնի դարձավ ու երևաց համաշխարհային մամուլի էջերում։ Հայտնի դարձավ, որ 1915 թ. մայիսի 20-ին թուրքական կառավարությունը դեկրետ է հրապարակել հայկական ազգաբնակչությանը Միջագետքի անապատային տափաստանները արտաքսելու մասին, այն հաշվով, որ արտաքսվածների մի մասը կոչնչանա ճանապարհին, իսկ մյուս մասը՝ այդ երկրի անապատներում[22]։ Թուրքերի ներքին գործերի մինիստր Թալյաթի հրամանները՝ հայերի կոտորածի և դեպորտացիայի մասին նույնպես դարձան հրապարակայնության սեփականությունը[23]։ Պահպանվել է նաև հայ որբերի ոչնչացման մասին թուրքական կառավարության հրամանի լուսանկարային պատճենն[24]։ Թալյաթի հրամանները Հալեպ քաղաքի նահանգապետին՝ հայերի կոտորածի մասին, հավաքված են առանձին գրքում[25]։ Հայերի բռնի դեպորտացիայի մասին թուրքական կառավարության դեկրետի տեքստը նույնպես իր ժամանակին հրապարակվել է ամերիկուհի Էգանի կողմից[26]։

Թուրքական կառավարող շրջանները հաշվի էին առնում, որ հայերի կոտորածը և նրանց դեպորտացիան կհանդիպեն բացասական վերաբերմունքի երկրի աշխատավոր մասսաների և առաջավոր տարրերի կողմից, որ այդ վերջինները, նախապատրաստական հատուկ միջոցներ չձեռնարկելու դեպքում, կարող են լուրջ խոչընդոտ հանդիսանալ կառավարության միջոցառումների իրականացման ճանապարհին։ Դրա համար էլ ամենից առաջ թուրքական իշխանությունները որոշեցին խիստ ռեպրեսիվ միջոցներ ձեռնարկել այն անձանց նկատմամբ, ովքեր կոտորածի և դեպորտացիայի ընթացքում կպաշտպանեն հայերին կամ կթաքցնեն նրանց։ Հայերի կոտորածի և աքսորման մասին թուրքական կառավարության դեկրետի վերջին կետը ասում էր. «Բոլոր նրանք, ովքեր ապաստան կամ սնունդ, կամ ուրիշ օգնություն ցույց կտան այն անձանց, որոնք հակառակ կառավարության որոշման, կփորձեն հրաժարվել արտաքսումից կամ թաքնվել, պետք է հանձնվեն ռազմական դատարանին և մահապատժի ենթարկվեն»[27]։ Այդ փաստաթղթերի ոգով հրամաններ էին տրվում նաև տեղերում։ Այսպես, թուրքական 3-րդ բանակային կորպուսի հրամանատար Մահմադը հեռագրել է այն տերիտորիայի իշխանություններին, որտեղ տեղավորված էր նրա կորպուսը. «Եմեն մի մուսուլման, որը կփորձի պաշտպանել որևէ հայի, կկախվի իր բնակարանի առաջ, իսկ նրա տունը կհրկիզվի»[28]։

---

22 Տե՛ս Պապաջանյանի ճառը 1915 թ. մարտի 11-ին Պետական Դումայում. «Армянский вестник», 1916, № 8:

23 Այդ հրամանները բերված են Ա. Այպոյաճեանի «Պատմություն հայ Կեսարիոյ» գրքում, էջ 1453—1465։

24 Տե՛ս ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 282, ց. 1, գ. 11, թ. 1։

25 The Memoirs of Naim Bey, Turkich Official Documents relating to the Deportations and Massacres of Armenians, London, 1920.

26 Տե՛ս Le traitement des armeniens dans l'Empire Ottoman (1915—1916). Paris, 1916, p.p. 536—537.

27 Նույն տեղում, էջ 537։

28 ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 60/200, գ. 284, թ. 58, «Դատավարություն Թալեաթ-փաշայի», Վիեննա, 1921, էջ 92։

Սպառնալիքներից բացի, թուրքական կառավարությունը ձեռնարկեց նաև մի շարք միջոցներ՝ մուսուլմանական բնակչության կրոնա-ֆանատիկական մշակման ուղղությամբ։

Բացի այդ, կառավարությունը տեղերում նշանակել էր իր գործակալներին, որոնք աչալուրջ կերպով հետևում էին տեղական պետերի գործողություններին և կենտրոնին ճշտությամբ զեկուցում էին կոտորածի և դեպորտացիայի մասին։ Տեղական իշխանությունների առանձին ներկայացուցիչների կողմից թուլություն կամ անվճռականություն հանդես բերելու դեպքում, այդ գործակալներն իրենք էին ձեռնամուխ լինում արտաքսման մասին հրամանը ամբողջ խստությամբ կատարելուն։

Դրա հետ միասին իթթիհատական կառավարությունը գույներ չէր խնայում, որպեսզի հայկական կոտորածի սարսափները վերագրի իր հնարած, այսպես կոչված հայ-քրդական գժտություններին։ Թալյաթը, կոկորդիլոսի արցունքներ թափելով, ձգտում էր հայկական կոտորածը ներկայացնել որպես հայերի ու քրդերի ռասայական անտագոնիզմի պատմական տխրալի ֆինալ։ Բայց թուրքական մինիստրի այդ մանները հերքվում էր փաստերով։

Չնայած վերը նշված բոլոր դրակոնյան և ճիլվիտական միջոցներին, որոնք ձեռնարկել էր թուրքական կառավարությունը, շատ քրդեր ու թուրքեր, գլխավորապես աշխատավորներից, ուժի ներածին չափ օգնություն էին ցույց տալիս հայերին։ Վերը արդեն ասվեց, որ մինչև պատերազմը միատեսակ տընտեսական և կենցաղային պայմաններում ապրող հայ և քուրդ գյուղացիները բարի հարևաններ էին։ Արևմտյան Հայաստանի տասնյակ գյուղեր ունեին խառը հայ-քրդական բնակչություն։ Այդ գյուղերում քրդերը ազատ խոսում էին հայերեն, սովորություններով և հագուստով քիչ էին տարբերվում հայերից։ Հայերին հատկապես բարեկամաբար էին վերաբերվում զզլբաշ քուրդ գյուղացիները։ Քուրդ զզլբաշները ապրում էին լեռներում, Էրզրումի հարթավայրից դեպի հարավ-արևմուտք, Մամախաթուն — Արաբկիր—Խարբերդ քաղաքների կազմած եռանկյան միջև։ Նրանց գլխավոր բաղաքը հանդիսանում էր Դերսիմը, որի անունով էլ նրանց հաճախ կոչում էին դերսիմցիներ։ Դերսիմցիներն իրենց մոտ թաքցրին և մահից փրկեցին հազարավոր հայերի։ Մի հեղինակի հաշվումներով դերսիմցիները 1916-ից մինչև 1920 թվականները փրկել են 20 հազար հայերի[29]։ Դերսիմցիները թաքցնելով հայերին, կատաղի մարտեր էին մղում թուրքական զորքերի դեմ։ 1916 թվականի մարտի 30-ին նրանց ջոկատները հասան մինչև Խարբերդ և պահանջվեց թուրքական 13-րդ բանակի հատուկ ջանքերը, որպեսզի ստիպեն նրանց ետ նահանջել[30]։

Հայերի ոչ պակաս պաշտպաններն էին նաև քուրդ-եզդիները, որոնք միայն Սանջար լեռան վրա (Մարտին քաղաքից դեպի հարավ-արևելք) թաքցրեցին մոտ 5000—6000 հայերի[31]։ Նույնը պետք է ասել նաև Մոկսի (Վանա լճից դեպի հարավ ընկած լեռնային տեղանք) քրդերի մասին, որոնց մոտ ապաստան գտան ոչ միայն Մոկսի հայերը, այլև Քարքար շրջանի (Վանի վիլայեթ) երեք հազար հայ բնակիչները և Վանի Կարճկան, Գավաշ, Շատախ գյուղերի այն-

29 Տե՛ս Գ. Ս. Երեանեան, Պատմություն Չարսանճագի հայոց, Պեյրութ, 1956, էջ 66։

30 Նույն տեղում, էջ 143։

31 Տե՛ս «Армянский вестник», 1917, № 29—30, стр. 15.

հայ գյուղացիները, որոնք հասցրել էին բարձրանալ այնտեղ[32]։ Արևմտյան Հայաստանի լեռնային դոտիով ռուսական զորքերի առաջխաղացման հետ զուգընթաց, գրեթե բոլոր քրդական գյուղերում հայտնաբերվում էին քրդերի կողմից թաքցված հայկական ընտանիքներ[33]։

Երիտասարդ թուրքերի կառավարության դահճային քաղաքականության դեմ թուրք աշխատավորության ելույթները ամենից առաջ արտահայտվում էին կոտորածի և դեպորտացիայի միջոցառումներին մասնակցելուց հրաժարվելու ձևով։ Եղել են նաև ոչ քիչ դեպքեր, երբ հասարակ թուրքերը, չնայելով ոչ մի սպառնալիքի, թաքցրել են հայերին կամ զենքը ձեռքներին հանդես են եկել ի պաշտպանություն նրանց։ Գրող Զաբել Եսայանը, որը իշխանություններից թաքնվել էր իր թուրք համաքաղաքացիների մոտ, բազմիցս լսել է նրանց անկեղծ կարծիքը հայկական կոտորածի նկատմամբ։ «Թուրքական ժողովրդական մասսան,— պատմում է Զ. Եսայանը,— որոշակիորեն դեմ էր այդ հետապնդումներին և այն իրականացնող կառավարությանը։ Հասարակ մարդկանցից հաճախ կարելի էր լսել, թե «սիրտդ վառվում է», երբ տեսնում ես, թե ինչ են անում հայերի հետ։ Բնակչությունը կատարվածի ողջ պատասխանատվությունը վերագրում էր «միավորում և առաջադիմություն» կոմիտեին ու գերմանացիներին, որոնց նկատմամբ կար թույլ քողարկված ատելություն»։ Երբ թուրքերից ինչ-որ մեկը Եսայանի մոտ ասաց, որ հայերին հետապնդում են այն բանի համար, որ նրանք դեմ են պատերազմին, մյուսները խմբով պատասխանեցին. «Իսկ ով է պատերազմի կողմնակից։ Մենք բոլոր թուրքերս դեմ ենք պատերազմին»[34]։ Եվ իրոք, թուրքական աշխատավոր մասսան իր զգալի մասով դեմ էր պատերազմին։ Դրա վառ ապացույցն էր թուրքական բանակի շարքերից զինվորների մասսայական դասալքումը և նրանց կողմից պարտիզանական ջոկատների ստեղծումը։

Թուրք և հայ աշխատավորների բարեկամության մասին են վկայում նաև փոխադարձ օգնության վերաբերյալ համաձայնությունները, որոնք նրանց միջև կնքվում էին կյանքի դժվարին պահերին։ Օրինակ, Բաղեշ քաղաքի թուրք աշխատավորները հայ աշխատավորներին առաջարկեցին դաշինք կնքել, որի համաձայն թուրքերը Բաղեշի հայերին կպաշտպանեն թուրքական իշխանությունների դահճային գործողություններից, իսկ ռուսական զորքերի կողմից քաղաքը դրավելու դեպքում, հայերը պետք է պաշտպան կանգնեին թուրքերին[35]։ Սակայն Բաղեշի թուրք աշխատավորներին չհաջողվեց դեմ կանգնել 15 հազարանոց զորքին՝ որոնք մինչև վերջ կոտորեցին այդ քաղաքի ամբողջ հայ բնակչությանը։ Մոտավորապես նույն բանը տեղի ունեցավ նաև Խնուսի հովտում։ Թուրք բնակչությունը սկզբում, երբ կոտորածին մասնակցում էին միայն քուրդ բեկերի հրոսախմբերը, առանձին վայրերում ուղղակի հանդես եկավ ի պաշտպանություն հայերի, բայց տեղ հասած ժանդարմական զորամասերը նրան ստիպեց մի կողմ քաշվել[36]։ Հայնթափ և Քիլիս քաղաքներում մուսուլման բնակչությունը նույնպես ընդդիմացավ հայերի արսորման վերաբերյալ հրամանին և իշ-

32 Տե՛ս Արտակ Դարբինյան. Հայ ազատագրական շարժման օրերեն, Փարիզ, 1947, էջ 295, 308—310։

33 Տե՛ս «Армянский вестник», 1916, № 33, стр. 13—14.

34 Նույն հանդեսում, 1916, № 15, էջ 12—13։

35 «Կոչնակ», Նյու-Յորք, 27 նոյեմբերի, 1915, № 48, էջ 1074։

36 ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 57, գ. 612, թթ. 1—2։

խանություններին սկզբում հաջողվեց աքսորել միայն 60 մարդ[37]։ Եղել են բազմաթիվ դեպքեր, երբ հասարակ թուրքերը օգնել են հետապնդվող հայերին։ Օրինակ, տրապիզոնցի Շեվքետ բեյ Շաթիր-զադեն, որի որդուն ժանդարմներն արդեն գնդակահարել էին աքսորվող հայերին աջակցելու համար, շատ էներգիա և աշխատանք վատնեց, որպեսզի փրկի մի քանի հայերի[38]։

Չնայած թուրքական կառավարության ձեռնարկած բոլոր նախազգուշական միջոցառումներին, կոտորածի և դեպորտացիայի ժամանակ հայերի կողմից ամենափոքր դիմադրությունն անգամ հենց սաղմում ճնշելու համար, վերջիններս գրեթե ամենուրեք պայքարի էին ելնում հանուն իրենց ֆիզիկական գոյության իրավունքի և այդ պայքարում ցույց էին տալիս խիզախության, հերոսության և արիության վեհագույն օրինակներ։ Արևմտահայերի ինքնապաշտպանության օջախները տարբերյալներն առաջացան Վանում, Շատախում, Վանա լճի վրա կղզում, Բաղեշում, Շապին-Գարայիսարում, Մուշում, Սասունում, Կովաթ-Շափայում, Մարաշում, Զեյթունում, Խնուսում, Խարբերդում, Բայբուրթում, Ջերալ-Մուսայում, Ուռֆայում, Պարտիզակում և ուրիշ վայրերում։

Ինքնապաշտպանության ելած հայերը պարզ տեսնում էին իրենց թշնամիներին՝ իթթիհաթական կառավարությանը և տեղերում նրա դրածոներին։ Իսկ թուրքական աշխատավոր մասսաների դեմ նրանք թշնամարար չէին տրամադրված։ Այդ տեսակետից հատկանշական է Վանի հայերի կոչը[39] քաղաքի թուրք աշխատավորներին, որի մեջ նշվում էր, որ ստեղծված դրության մեղքն ընկնում է Վանի վալի Ջևդեթի վրա, և առաջարկվում էր ազդել նրա վրա և դադարեցնել արյունահեղությունը։ Կոչի մեջ նշվում էր, որ Ջևդեթի նման կառավարիչները գալիս են ու անցնում, իսկ ժողովուրդները մնում են, և նրանք ոչ մի հիմք չունեն փոխադարձ թշնամության համար։ Բայց Ջևդեթն ու նրա սպասավորներն ամեն ինչ արեցին այն բանի համար, որպեսզի թուրք աշխատավորները չլսեն Վանի պաշտպանների ձայնը։

Ինքնապաշտպանության ելած հայերը ոչ քիչ բարեկամներ ունեին քուրդ և թուրք աշխատավոր բնակչության մեջ, որոնք մշտապես կարեկցում և օգնում էին նրանց։ Նրանցից մեկը քուրդ Հասանը, հայերի հետ բարեկամության համար վաղուց ի վեր հետապնդվում էր թուրքական իշխանությունների կողմից։ 1915—1916 թվականների ձմռանը նա ծառայում էր թուրքական զորքերին մատակարարող թուրքական տրանսպորտներից մեկում և, շնորհիվ դրա, տեղյակ էր ճակատի դրությանը։ Ամբողջ ձմեռը նա օգնում էր պաշտպանվող սասունցիներին՝ նրանց հասցնելով ալյուր, ծխախոտ և տեղեկություններ արտաքին աշխարհի մասին։ Հասանը սասունցիներին տեղեկություն հաղորդեց, որ թուրքական հրամանատարությունը պատրաստվում է 1916 թ. հունվարի 23-ին նրանց դեմ նոր պատժիչ արշավախումբ ուղարկել։ Դրա հետ մեկտեղ նա հայտնեց, որ ռուսական զորքերը արդեն գտնվում են Մուշ քաղաքի մատույցներում, և որ արդեն մոտ է սասունցիների փրկությունը։ Հունվարի 23-ին թուրքական ասկյարների վաշտերը բարձրացան Սասուն, բայց չգտնելով նախազգուշացված հայերին, վերադարձան ձեռնունայն[40]։ Կովաթ-Շափի (Տրապիզոնի վիլայեթ)

---

37 Տե՛ս «Կոչնակ», 30 հոկտեմբերի, 1915, № 44, էջ 965։

38 Տե՛ս «Армянский вестник», 1916, № 15, стр. 9.

39 Վանի հայերի ինքնապաշտպանությունը տևեց մոտավորապես մեկ ամիս՝ 1915 թ. ապրիլի 7-ից մինչև մայիսի 3-ը, և ռուս զորքերի մոտեցման կապակցությամբ ավարտվեց հաջող։

40 Տե՛ս «Армянский вестник», 1916, № 23, стр. 4.

հայ բնակչության ութամսյա ինքնապաշտպանության մեջ ոչ քիչ դեր խաղաց Թուրք Շեվքետ-բեյը։ Դիմադրության ամբողջ ժամանակաշրջանի ընթացքում նա հայերի շարքերում կռվում էր թուրքական զորքերի դեմ և ռուսական զորքերի Տրապիզոն մանելու պահին հայերի հետ մեկտեղ իջավ քաղաք[41]։ Սինջար լեռան վրա ինքնապաշտպանություն կազմակերպած հայերին օգնում էին նրանց շրջապատի քուրդ-եզդիները։

Բերված փաստերը խոսում են այն մասին, որ չնայած գործադրած բոլոր ջանքերին, թուրքական կառավարող վերնախավին չհաջողվեց իր գործողություններին մասնակից դարձնել թուրքական և քրդական աշխատավոր լայն մասսաներին։ Բայց նրան, այնուամենայնիվ, հաջողվեց օգտագործելով ռազմական իրադրությունը, հենվելով բանակի, ոստիկանության, ժանդարմերիայի և քուրդ բեկերի հրոսակախմբերի վրա, իրականացնել հայերի ընդհանուր կոտորածը, որի միջոցով անուղղելի հարված հասցվեց հայ հասարակության բոլոր դասակարգերին։

Հայ հասարակության ամենից բազմաքանակ դասակարգի՝ գյուղացիության բնաջնջմամբ թուրքական կառավարությունը հասավ այն բանին, որ Արևմտյան Հայաստանի հողերը վերջնականապես մաքրվեցին հայերից և ամբողջ գյուղատնտեսությունը հանձնվեց թուրք և քուրդ հողատերերի ձեռքը։

Բնաջնջելով հայ բանվորներին, թուրքական կառավարությունը միանգամից լուծեց իր ռեակցիոն ներքին քաղաքականության երկու հարց. 1. լիկվիդացրեց հայ ժողովրդի ամենաակտիվ մասին, 2. նշանակալիորեն թուլացրեց Թուրքիայի ամբողջ բանվոր դասակարգի ուժը, որի նկատմամբ կառավարությունը վարում էր կոպիտ ռեպրեսիաների լկտի քաղաքականություն։ Թուրքիայի այն ժամանակ առաջ եկող բանվոր դասակարգի մեջ, ինչպես մենք տեսանք Սվազի վիլայեթի օրինակով, և, հատկապես, որակյալ բանվորների մեջ, ոչ քիչ թվով հայեր կային։ Նրանց բնաջնջմամբ կառավարությունը շատ ուժեղ հարվածեց առանց այդ էլ թույլ բանվոր դասակարգին։

Հայ կոմպրադորները մինչև պատերազմը դերիշխող դիրք էին գրավում երկրի արտաքին և ներքին առևտրում։ Նրանք անհամեմատ ավելի լավ և մեծ մասշտաբներով, քան թուրք բուրժուաները, կապված էին արտասահմանյան կապիտալի հետ, ինչպես երկրի ներսում, այնպես էլ նրա սահմաններից դուրս։ Թուրքիայում հայ բուրժուազիային էր պատկանում մանուֆակտուրայի, ծածկաթիթեղի ու երկաթի, շինանյութերի և այլ ապրանքների առևտուրը։ Նա իրականացնում էր մայրաքաղաքի առևտրական կապերը ինչպես երկրի ներքին շրջանների, այնպես էլ արտասահմանի հետ։ Բայց պատերազմը սկսվելու հետ՝ Թուրքիայի արտաքին առևտրի անկման հետևանքով, Թուրքիայում հայ բուրժուազիայի դերն ու նշանակությունն զգալիորեն ընկավ, իսկ ներքին առևտրում թուրքական կառավարությունն ամեն կերպ ձգտում էր խլել հայ կոմպրադորների դիրքերը և դրանք հանձնել աստիճանաբար ամրացող թուրքական բուրժուազիային։ Հայ և թուրք բուրժուազիայի միջև այդ տնտեսական պայքարը ի վերջո թուրքական կառավարության կողմից արտահայտվեց ազգային հակամարտության ձևով և լայն ծավալ ստացավ հայ ժողովրդի մասսայական կոտորածի միջոցով։ Բայց, որպեսզի երկրի ներքին առևտրում հայ բուրժուազիայի կողմից կատարվող գործարքները հանձնվեն թուրք բուրժուազիայի ձեռքը, կա-

41 Տե՛ս «Կոչնակ», 1916, 8 հուլիսի, № 28, էջ 734։

ռավարությանը ժամանակ էր հարկավոր։ Այդ պատճառով էլ կոտորածի առաջին ժամանակաշրջանում հայ բուրժուազիան, որը գլխավորապես կենտրոնացված էր Կոստանդնուպոլսում և ծովափնյա ուրիշ քաղաքներում, համեմատարար հանգիստ էր թողնված։ Այդ վայրերի հայերի կոտորածն ու դեպորտացիան իրականացվեց համեմատարար ավելի ուշ՝ 1915 թ. աշնանը, այսինքն, այն բանից հետո, երբ թուրքական կառավարության կողմից մանրակրկիտ ձևով կշռադատվեցին հայ բուրժուազիայից ֆիզիկական ազատագրման հետևանքները։ Երբ Կոստանդնուպոլսում ամերիկյան դեսպան Մորգենտաուն Թալյաթին հայտնեց, որ հայ բուրժուազիայի ոչնչացումը ձեռնտու չէ թուրքական կառավարությանը, քանի որ նա հանդիսանում է կառավարության ամենաճշտապահ հարկատուն, Թալյաթը պատասխանեց դեսպանին, որ դա հաշվի է առնված թուրքական կառավարության կողմից, որ հայ բուրժուազիայի ֆիզիկական բնաջնջման հետևանքով գանձարանի վնասը չի անցնի 5 միլիոն թուրքական ոսկե լիրայից, և որ դա իրեն բոլորովին չի անհանգստացնում[42]։

Հայկական ազգարնակչության կոտորածն ու դեպորտացիան լցրեց կառավարության և տեղերում նրա ներկայացուցիչների գրպանները, հարստացրեց թուրքական բուրժուազիային և քուրդ բեկերին։ Իսկ թուրք և քուրդ աշխատավորները այդ արյունալի թալանից չէին կարող ստանալ և չստացան ոչ մի շահ։ Հենց այդ էր պատճառը, որ հայերի կոտորածով շահագրգռված էին թուրքական հասարակության շահագործող դասակարգերը, իսկ թուրքական և քրդական աշխատավորների զգալի մասը դեմ էր այդ գազանային ջարդին։

---

[42] Տես Memoires de l'ambassadeur Morgenthau, Paris, 1919, pp. 291—292.